

**ՊԱՇՏՈՆ**

ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՃԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՃԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Հաշիվների և վարկերի

հետգործառնական բաժնի մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

27/03/2023

14/04/2023

Որոշակի

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Հաշիվների և վարկերի հետգործառնական բաժնի մասնագետ:

**ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականների կատարում,
- Տարանցիկ հաշիվներին ստացված գումարներից վարկերի վարկային գծերի մարումների իրականացում,
- Հաճախորդների կողմից ուղարկված որոշ գրությունների, դիմումների պատասխանների պատրաստում, ուղարկում,
- «Նվեր քարտերի» հաճախորդների տվյալների ներմուծում Համակարգ,
- Հաճախորդների քաղվածքների արտահանում և տրամադրում Բանկի համապատասխան ստորաբաժանմանը հաճախորդներին փոստային առաքման միջոցով ուղարկելու նպատակով,
- Ֆիզիկական անձանց ոչ ստանդարտ կադապարներով և իրավաբանական անձանց ավանդների երկարաձգում Համակարգում,
- Ժամկետանց վարկերի մարում քարտային հաշիվներին գումարի առկայության դեպքում,
- Կառուցապատողների հատուկ հաշիվների կառավարում, գումարի սառեցում/ապասառեցում, հաշվեգրված տոկոսների վճարում,
- Չգործող գրոյական մնացորդով հաշիվների փակում,
- Bankmail համակարգով ստացված դրամական փոխանցումների արժույթը ստացող հաշվի արժույթից տարբերվելու դեպքում գումարի փոխարկման իրականացում,
- Բանկում գրավադրված ոսկու վաճառքից հետո համապատասխան պարտավորությունների մարման հետ կապված ձևակերպումների իրականացում, գրավների մարում, հաշվետվության ներկայացում վարկերի մարումների և մնացորդային գումարների վերաբերյալ,
- Սոցիալական փաթեթի շրջանակներում սպասարկվող հաճախորդների փոխանցումների հետ կապված գրությունների տրամադրում հարցում կատարող կողմին:

## ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Եզրույթապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրական ուղարկել [hr@idbank.am](mailto:hr@idbank.am) էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» անվանումով: Այդի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>